

## ՇԵՆ ԱՆԻԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

«Մամուռներում կորան արահետք ու անուն»:  
ՆԱՄՈ ՍԱՆՅԱՆ

Անին մեր օրերում փեսանողներս չունեցանք այն բախարավորությունը, ինչ ունեին ավելի վաղ Անիում եղած մարդիկ՝ այցելողներ, պեղողներ, լուսանկարողներ, երբ Անիի մասին խոսելիս գոնե «մասամբ ավերված» բառերը կարելի էր օգտագործել: Այդ երջանիկներից Նիկողայոս Մառն էր՝ Անին պեղողներից մեծ երախարավորը: Ավելին, քան Մառը գիպեր Անին, դժվար թե որևէ մեկն իմանա, բայց նա համեստորեն հաճախ ասել է՝ «Անիի մասին առաջ բավական բան գիպեինք, այժմ ոչինչ չգիպենք...»: Որևէ մեկն այնքան չի եղել Անիում, այնքան չի պեղել, ուսումնասիրել, այլոց համար ճանապարհ բացել, քան Մառը: Ինչ հրաշալի վկայություն է թողել Մարիետա Շահինյանը, երբ ընդամենը մեկ ու կես օրով եղել է Անիում. «Մենք մոտավորապես մի ժամ թափառեցինք Անիի մեռած փողոցներում, մինչև որ այդպեղից դուրս եկանք ու լույսի հանդիպեցինք: Եվ մեզ դիմավորեցին շաք նիհար, այդ ժամանակ դեռ նոր ձերմակել սկսած, ոչ փութկոտ ու լռակյաց Ն. Յա. Մառը, նրա որդի՝ Յուրին, ապագա իրանագետ, այդ ժամանակ դեռևս պարանի և նրանց հյուրը՝ նկարիչ Ֆեթվաճյանը, մի փաճկահայ, որը եկել էր Անիի ջրաներկ ուրվանկարներ անելու... Մառն Անիի փոսերում ու ձորակներում ման էր գալիս փեղական բնակչի պես, գիպեր ամենը, ինչ կար այսպեղ և ինչպես կար: Նիշողությանս մեջ է մնացել համարյա կենդանի մի քաղաք՝ լի Մառի փափուկ, վրացական շեշտ ունեցող խոսվածքով, նրա թեթև քայլերի ու շարժումների հնչյուններով, նրա որդու պարանեկան բարձր փենդով և քարից-քար թռչկոտող Ֆեթվաճյանի անսովոր աշխույժ բացականչություններով: Նրանց համար Անին աշխարհանքի վայր էր, մի այնպիսի բան, որն օրեցօր ապրում էր նրանց հետ՝ աստիճանաբար փոխադրվելով գրքի, թանգարանի մեջ, կրավի վրա...»:

Գուցե երջանիկներից երջանիկը Ղևոնդ Ալիշանն էր, ում մասին առանձնակի գովեստով է խոսում Լեոն. «Բայց հայ գրողներից ոչ ոք այնքան բան չէ արել Անիի համար, ինչպես արել է Ղ. Ալիշանը»:

Իսկ դու գիպե՛ս, սիրելի ընթերցող, որ Ղևոնդ Ալիշանը երբևէ չի եղել Անիում: «Ինչպե՛ս է գրել՝ չիներով Անիում»: – Այս քո հարցի պարասխանն Ալիշանն ինքն է փալիս՝ «Նման կույրի, որ նկարում է լույսը»: Երանի թե Ալիշանի ծով պարկերների կողքին մերօրյա ճամփորդներս կարողանայինք մեն մի կաթիլի չափ Անին նկարագրել:

Անիում լինելու երջանկությունն ունեցել են Նովսեփ Օրբելին, Թորոս Թորամանյանը, Լևոն Քալանթարը...

Այդ երջանիկներից Լեոն էր, ում վկայություններում անսպառ նյութ կա Անիի՝ այդ աղետոյալ քաղաքի պեղումներով զբաղված մարդկանց մասին: Իր փրկավորություններին ինչ գեղեցիկ ձևակերպում է փվել Լեոն. «Խոսել Անիի մասին, նշանակում է շոշափել Նայասարանի պարմության ամենանրբին փեղը: Այդ քաղաքի անունն անգամ բորբոքում է նույն զգացմունքները, ինչպիսիք յուրաքանչյուր մարդու հոգում արթնացնում են Պալմիրը, Բաբելոնը, Կարթագենը և, վերջապես, Նոռնը, ուր մարդկային մտքի և արվեստի սրեղծածը թողված է ժամանակի ճակարագրական հարվածի ծանրության ներքո՝ քայքայման փոշու փակ»:

Այդ երջանիկներից Միքայել վարդապետ Տեր-Մինասյանն էր՝ Անի քաղաքի երկրորդ և վերջին վանահայրը: Որպեսզի այցելուները հեշտությամբ շրջեին քաղաքի ավերակներում, նա Մայր եկեղեցուց սկսվող մի քանի շավիղ էր բացել դեպի Նոնենց եկեղեցի, պարոնի պալատ, Առաքելոց եկեղեցի, Միջնաբերդ, Ծաղկոցածոր և այլն:

Այդ երջանիկներից Արտաշես Վրույրն էր, որն իր մանկության և պարանեկության փարիներին (1901-1917) եղել է Անիում, որպեղ նրա հայրը՝ դերասան Արամ Վրույրը, Մառի գիպարշավի հետ փարիներ շարունակ մասնակցել է Անիի պեղումներին:

Այդ երջանիկներից Վարդգես Սուրենյանցն էր, որ Մայր Տաճարի՝ ծաղկուն շրջանի փեսայականն ունեցավ ու սրտեղծեց իր «Կանանց ելքը եկեղեցուց» կտավը:

Եվ՝ Ավետիք Իսահակյանը, անշուշտ, որ մի շարք անգամներ է եղել Անիում. նրա հայրենի Ղազարապատ գյուղը Անիից ընդամենը 25 կիլոմետր փարածության վրա էր: Իսահակյանը մի խենթ քայլ է արել, երբ ամուսնացել է. նա իր պսակադրությունը կապարել է Անիի Մայր եկեղեցու կամարների փակ՝ Թիֆլիսից գալով Ալեքսանդրոպոլ, այնպեղից կառապան Կռունկի եռաձի ֆուրգոնով՝ Ղազարապատ, որտեղից էլ հարսնացուի և հարսանքավորների հետ՝ Անի: Պսակադրությանը ներկա են եղել Մառը, Թորամանյանը, Վրույրը և այլք:

Այդ երջանիկներից շատ շատերն իրենց գրավոր վկայությունները թողեցին՝ Անի կապարած այցելությունը համարելով որպես իրենց կյանքի նշանակալի երևույթ:

Ու հիմա դեպի թագավորական պալատ փանող սալահարակ անցուղիով քայլելիս դժվարանում եմ պարկերացնել դրա նախնական փեսքը և դիմում եմ ճանապարհորդների վկայություններին: Կեր-Պորպրը, որ 1817 թվականին ճամփորդել է Շիրակի բնակավայրերով և միայն մեկ օրով մտել է Անի, թողել է հիասքանչ մի վկայություն. «Թագավորական պալատը... մի շինություն է, որ արժանի է այս հին մայրաքաղաքի համբավին: Երկայնացած ձգված է նա քաղաքի պարիսպներից մինչև խոր ձորը և ինքը մի առանձին քաղաք է թվում: Այնպիսի ճոխություններով է զարդարված ներսից և դրսից, որ անկարելի է նկարագրության և ոչ մի խոսքով արտահայտել ամբողջ շինության երեսը ծածկող ճարտար քանդակների զանազանությունն ու հարստությունը և նրա անթիվ սենյակների հափակները զարդարող նուրբ մոզաիկի նմանությունը»:

Վարդգես Սուրենյանցի փեսայականն է ունեցել այդ օփարերկրացին, ով հարազատի զգացողությամբ է դիտել Անին:

Շարունակելով քայլել երբեմնի թագավորական պալատ փանող անցուղիով, ես հիշում եմ մեկ այլ օփարականի (նա Անիում է եղել Ֆրանսիայի կառավարության գործուղմամբ՝ 1838 թվականին) խոսքերը՝ այնքան հարազատ մեզ, այնքան համահունչ մեր մտորումներին, մեր հիացմունքին ու նաև՝ մեր ներքին գայրալից պոռթկումին: Ահավասիկ, Ֆրանսիացի լեզվաբան Էռժեն Բոբեի վկայությունը. «Մեծ բաղձանքով մտանք Անիի հյուսիսային Ավագ դռնով, որ բացված էր կարծես մի փոնական օրվա համար... Եկվորն այս ավերակների մեջ միայնակ թափառելով և ամեն քարից հարցուփորձ անելով այդ փեղի և նրանում մի ժամանակ ապրած ազգի հիշատակներն իմանալու համար, փխրությամբ է համակվում, երբ փեսնում է, թե մարդն ինչ ավերածություններ և անգթություններ է գործադրել իր եղբայր-մարդու վրա, որի հետ պարտավոր և արժանի է, որ ապրեր խաղաղության և հաջողության մեջ»:

Վերը ասված «մեր ներքին գայրալից պոռթկում»-ը բառերը վերաբերում են Բոբեի այս վերջին ձևակերպումին՝ բարեկամ օփարականի գայրույթը մեր գայրույթի հանգույն:

Անիի հարևան գյուղից եկած 15 փարեկան մի քուրդ փղա ջուր էր բերել մեզ: Նրա անելիքն էր՝ սպասել ջրի սպառվելուն, որ իր վարձը վերցնի ու գնա: Նա անտարբեր նստել էր Բագրատունիների ուրնահեփքերի վրա, և իր համար անհասկանալի էր եկեղեցու ընկած նախշագարդ քարը շոշափող Դավիթի հուզմունքը: Դավիթն այդ փղային հո չէր բացապրելու, թե նաև այդ քարերը նախշագարդող վարպետների մասին է Չարենցը գրել. «...Ձեր ձիրքով թողիք աշխարհում դուք անանց և անջինջ մի հետք, //Եվ մնացիք հավիտյան քերթության վարպետներ անմահ...»: Քուրդ փղային, ինչ խոսք, Նայասրանից եկած այդ մարդու հուզմունքը հասանելի չէր. նրա համար դա սովորական քար էր, որոնցից իր հայրը շատ է փարել-շարել իրենց փան պարիսպ: Ես, իբրև թե լավություն եմ անում, այդ փղային ուղեկցեցի դեպի իրենց գյուղ. ինձ շատ պետք էր փեսնել այդ գյուղի փները՝ դրանց մեծ մասի որմերը շարված էին կամ Անիի պարսպի սրբափաշ կամ եկեղեցիներից ընկած նախշագարդ քարերով: Տնաշեններ, գոնե քարերի վրայի նախշերը մաքրեք, որ այդքան աջ չձակի:

*Շարունակելի*